ԼՈՒՍՆԻ ՇՈՂԸ ՊԱՏՈՒՀԱՆԻՑ ՆԵՐՍ ԸՆԿԱՎ...
(ՀՈՎ ԳԻՇԵՐ, ԶՈՎ ԳԻՇԵՐ)



Լուսնի շողը պատուհանից ներս ընկավ,
Բայց այդ շողից իմ սիրածի շողն է լավ,
Ողջ աշխարհը մուշ-մուշ, անուշ քնել է,
Անքուն սիրտս սիրած յարիս ձայն տվավ:

Կրկներգ.
Հով գիշեր, զով գիշեր, սեր եմ երգում.
Լուսինը լողում է երկնքում:

Սպասում եմ, որ դու քնից արթնանաս,
Շողը վրեդ, ցողը վրեդ բարձրանաս,
Հազար ծաղկով՝ ջահել սրտիս գարուն տաս,
Որ գարունս հավերժական միշտ մնա:

Չես մոռանա գուսան Աշոտ անունս,
Միշտ դալար է, ձմեռ չունի գարունս.
Երգ հյուսելն է իմ հանգիստս, իմ քունս,
Սիրո երգս աշխարհը թող իմանա: